Հավելված N 80
Հաստատված է
Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ. հուլիսի 26-ի N 636-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման և կոոպերացիայի զարգացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 23-32.4-Ղ3-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Էկոնոմիկայի նախարարին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին ենթակա և հաշվետու են Բաժնի պետերը:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության Բաժինների պետերից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. ապահովում է գյուղատնտեսության ոլորտում տիրող փաստացի իրավիճակի համալիր ուսումնասիրության և վերլուծության իրականացումը, ոլորտի գործունեության բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունների և միջոցառումների մշակումը,
2. ապահովում է գյուղատնտեսության ոլորտի ռազմավարական ծրագրերի, ծրագրային միջոցառումների, հայեցակարգերի, պետական աջակցության ծրագրերի, իրավական ակտերի մշակումը,
3. ապահովում է ագրոպարենային համակարգում ընդգրկված ոլորտները բնութագրող ցուցանիշների կանխատեսումը և զարգացման ծրագրերի մշակման և ծրագրային միջոցառումների պլանավորման և ժամանակացույցի կազման աշխատանքների իրականացումը,
4. ապահովում է ոլորտի զարգացման գերակա ուղղությունների կանխորոշումը, մշակվող ծրագրերի ֆինանսավորման ծավալների և աղբյուրների որոշմանը մասնակցությունը,
5. ապահովում է ագրարային ոլորտում տնտեսավարման ձևերի, մասնավորապես գյուղատնտեսական կոոպերացիայի խթանման քաղաքականության մշակումը և այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների համակարգումը,
6. ապահովում է գյուղատնտեսական ռեսուրսների օգտագործման վիճակի ուսումնասիրումը, դրանց արդյունավետ օգտագործման ու գյուղատնտեսական հողերի շուկայի զարգացման քաղաքականության մշակումը,
7. ապահովում է Եվրասիական տնտեսական միությանը և Անկախ Պետությունների

Համագործակցության (այսուհետ՝ ԱՊՀ) անդամակցությամբ պայմանավորված գյուղատնտեսության պետական աջակցության, ագրոպարենային համակարգի գործունեության հետ առնչվող նյութերի նախապատրաստումը և տրամադրումը, իր գործառույթների շրջանակներում համատեղ աշխատանքային խմբերի աշխատանքներին մասնակցությունը,

8. ապահովում է Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամակցության հետ պայմանավորված 1994 թվականի ապրիլի 15-ին ընդունված Գյուղատնտեսության մասին համաձայնագրի շրջանակներում ոլորտին առնչվող տեղեկատվության մշակումը և ներկայացումը,

9. ապահովում է գենդերային և այլ բնագավառներին վերաբերող ծրագրային փաստաթղթերի վերաբերյալ գյուղատնտեսության ոլորտին առնչվող առաջարկությունների և հաշվետվություններ նախապատրաստումը,

10. ապահովում է ագրարային ոլորտի գործունեության հետ առնչվող Հայաստանի Հանրապետության գերատեսչություններից, տարբեր կազմակերպություններից ստացվող իրավական ակտերի նախագծերի և այլ փաստաթղթերի քննարկման իրականացումը և համապատասխան առաջարկությունների ներկայացումը,

11. ապահովում է ագրարային ոլորտի գործունեությանն առնչվող քաղաքացիներից ստացվող առաջարկությունների, հարցադրումների, սկզբունքային խնդիրների և ծրագրային առաջարկների քննարկումը և համապատասխան ընթացքը,

12. ապահովում է իր իրավասությունների շրջանակներում աշխատանքների կազմակերպումը և իրականացումը՝ համագործակցելով Նախարարության այլ ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների, հետազոտական կառույցների, միջազգային կազմակերպությունների և փորձագետների, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ,

13. ապահովում է Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, անհրաժեշտության դեպքում շահագրգիռ պետական և ոչ պետական մարմինների համագործակցությամբ, Վարչության գործունեության ոլորտներին վերաբերվող օրենքների և իրավական այլ ակտերի, զեկույցների, հաշվետվությունների, ծրագրային փաստաթղթերի նախագծերի նախապատրաստումը:

Իրավունքները՝

- պահանջել գյուղատնտեսության ոլորտում տիրող փաստացի իրավիճակի համալիր ուսումնասիրության և վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվություն, ոլորտի գործունեության բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ և միջոցառումներ,
- պահանջել առաջարկություններ գյուղատնտեսության ոլորտի ռազմավարական ծրագրերի, ծրագրային միջոցառումների, հայեցակարգերի, պետական աջակցության ծրագրերի, իրավական ակտերի մշակման համար,
- պահանջել ագրոպարենային համակարգում ընդգրկված ոլորտները բնութագրող ցուցանիշների կանխատեսման, զարգացման ծրագրերի մշակման և ծրագրային միջոցառումների պլանավորման համար անհրաժեշտ ելակետային տվյալներ և առաջարկություններ,
- պահանջել ոլորտի զարգացման գերակա ուղղությունների վերաբերյալ առաջարկություններ,
- պահանջել ագրարային ոլորտում տնտեսավարման ձևերի, մասնավորապես գյուղատնտեսական կոոպերացիայի խթանման քաղաքականության վերաբերյալ

առաջարկություններ,

• պահանջել գյուղատնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման ու գյուղատնտեսական հողերի շուկայի զարգացման քաղաքականության մշակման վերաբերյալ առաջարկություններ,

• ստանալ Եվրասիական տնտեսական միությանը և Անկախ Պետությունների Համագործակցության (այսուհետ՝ ԱՊՀ) անդամակցությամբ պայմանավորված գյուղատնտեսության պետական աջակցության, ագրոպարենային համակարգի գործունեության հետ առնչվող նյութեր,

• ստանալ Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամակցության հետ պայմանավորված 1994 թվականի ապրիլի 15-ին ընդունված Գյուղատնտեսության մասին համաձայնագրի շրջանակներում ոլորտին առնչվող տեղեկատվության մշակման համար անհրաժեշտ նյութեր,

• ստանալ գենդերային և այլ բնագավառներին վերաբերող ծրագրային փաստաթղթերի վերաբերյալ գյուղատնտեսության ոլորտին առնչվող առաջարկություններ,

• ստանալ առաջարկություններ ագրարային ոլորտի գործունեության հետ առնչվող Հայաստանի Հանրապետության գերատեսչություններից, տարբեր կազմակերպություններից իրավական ակտերի նախագծերի և այլ փաստաթղթերի վերաբերյալ,

• պահանջել ագրարային ոլորտի գործունեությանն առնչվող քաղաքացիներից ստացվող առաջարկությունների, հարցադրումների, սկզբունքային խնդիրների և ծրագրային առաջարկների վերաբերյալ համապատասխան լուծումներ,

• աշխատանքների իրականացումն ապահովելու նպատակով համագործակցել Նախարարության այլ ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների, հետազոտական կառույցների, միջազգային կազմակերպությունների և փորձագետների, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ,

• պահանջել Վարչության գործունեության ոլորտներին վերաբերվող օրենքների և իրավական այլ ակտերի, զեկույցների, հաշվետվությունների, ծրագրային փաստաթղթերի նախագծերի նախապատրաստումը:

Պարտականությունները՝

• ամփոփել գյուղատնտեսության ոլորտում տիրող փաստացի իրավիճակի համալիր ուսումնասիրության և վերլուծության արդյունքները, ապահովել ոլորտի գործունեության բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունների և միջոցառումների մշակումը,

• ապահովել գյուղատնտեսության ոլորտի ռազմավարական ծրագրերի, ծրագրային միջոցառումների, հայեցակարգերի, պետական աջակցության ծրագրերի, իրավական ակտերի մշակումը,

• ամփոփել ագրոպարենային համակարգում ընդգրկված ոլորտները բնութագրող ցուցանիշների կանխատեսումը և զարգացման ծրագրերի մշակումը,

• ապահովել ոլորտի զարգացման գերակա ուղղությունների կանխորոշումը, ամփոփել մշակվող ծրագրերի ֆինանսավորման ծավալները,

• ապահովել ագրարային ոլորտում տնտեսավարման ձևերի, մասնավորապես գյուղատնտեսական կոոպերացիայի խթանման քաղաքականության մշակումը,

• ամփոփել գյուղատնտեսական ռեսուրսների օգտագործման վիճակի ուսումնասիրման արդյունքները, ապահովել դրանց արդյունավետ օգտագործման ու գյուղատնտեսական հողերի շուկայի զարգացման քաղաքականության մշակումը,

• ապահովել Եվրասիական տնտեսական միությանը և Անկախ Պետությունների Համագործակցության (այսուհետ՝ ԱՊՀ) անդամակցությամբ պայմանավորված գյուղատնտեսության պետական աջակցության, ագրոպարենային համակարգի գործունեության հետ առնչվող նյութերի նախապատրաստումը և տրամադրումը, իր գործառույթների շրջանակներում համատեղ աշխատանքային խմբերի աշխատանքներին մասնակցությունը,

• ներկայացնել Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամակցության հետ պայմանավորված 1994 թվականի ապրիլի 15-ին ընդունված Գյուղատնտեսության մասին համաձայնագրի շրջանակներում ոլորտին առնչվող տեղեկատվությունը,

• ամփոփել գենդերային և այլ բնագավառներին վերաբերող ծրագրային փաստաթղթերի վերաբերյալ գյուղատնտեսության ոլորտին առնչվող առաջարկությունները և ներկայացնել հաշվետվություններ,

• ներկայացնել ագրարային ոլորտի գործունեության հետ առնչվող Հայաստանի Հանրապետության գերատեսչություններից, տարբեր կազմակերպություններից ստացվող իրավական ակտերի նախագծերի և այլ փաստաթղթերի քննարկման արդյունքում ձևավորված առաջարկություններ,

• ապահովել ագրարային ոլորտի գործունեությանն առնչվող քաղաքացիներից ստացվող առաջարկությունների, հարցադրումների, սկզբունքային խնդիրների և ծրագրային առաջարկների քննարկումը և համապատասխան ընթացքը,

• ապահովել իր իրավասությունների շրջանակներում աշխատանքների կազմակերպումը և իրականացումը,

• ապահովել Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, անհրաժեշտության դեպքում շահագրգիռ պետական և ոչ պետական մարմինների համագործակցությամբ, Վարչության գործունեության ոլորտներին վերաբերվող օրենքների և իրավական այլ ակտերի, զեկույցների, հաշվետվությունների, ծրագրային փաստաթղթերի նախագծերի նախապատրաստումը:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գյուղատնտեսության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում

3. Կոնֆլիկտների կառավարում
4. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
5. Ժամանակի կառավարում
6. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
7. Փաստաթղթերի նախապատրատում
8. Բողոքների բավարարում
9. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մեկ կամ մի քանի ոլորտների համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն, և ազդեցությունը սահմանափակվում է համապետական մակարդակով որոշակի ոլորտով:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: